ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ

«ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Քննարկված և ընդունված է
գիտական խորհրդի 22.06. 2021 թ թ.
Թիվ 10 նիստում

Հաստատում եմ՝
համալսարանի ռեկտոր՝
հ.գ.դ., պրոֆ._____Ս.Ա.Սեդրակյան
23.06. 2021 թ

ԳՍՀ «Ուրարտու» համալսարանի ուսանողի իրավունքները և պարտականությունները

Համալսարանի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, որոնք կոնկրետացնում են ՀՀ քաղաքացու՝ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանելիս հիմք են ծառայել նաև ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի կանոնադրության, ռազմավարական ծրագրի պահանջները, որոնց կարևորագույն նպատակը համապատասխան գիտելիքներով, հմտություններով, կարողություններով օժտված մասնագետի, մարդու և քաղաքացու ձևավորումն է:

I. ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ուսանողի իրավունքները

1. Համալսարանի ուսանողն իրավունք ունի.

1) հաճախելու համալսարանում կազմակերպվող դասընթացներին,

2) ստանալու միջազգային աշխատաշուկայի կարիքներին համապատասխանող գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,

3) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,

4) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,

5) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է համալսարանում՝ ըստ սահմանված կարգի,

6) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ

մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին,

8) Անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ընթերցասրահից, ուսումնական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

9) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,

10) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և այլ ուսանողական կազմակերպություններում,

11) ընտրելու և ընտրվելու համալսարանի կառավարման մարմիններում, ուսանողական հասարակական կազմակերպություններում , մասնակցելու դրանց աշխատանքներին, հանդես գալ առաջարկություններով,

12) բողոքարկելու համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

13) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ (ներառյալ՝ անվանական), դրամաշնորհ, ուսանողական վարկ, օգտվելու ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից,

14) ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերին, բուհի հետ կնքելու ուսումնառության պայմանների մասին պայմանագիր,

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան,

անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

16) ուսուցման առկա ձևով սովորող ուսանողը ուսումնական տարվա ընթացքումիրավունք ունի առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում,

17) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում՝ բուհի սահմանած կարգով հանրակացարանում ստանալու համապատասխան տեղ,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,

19) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի սահմանած կարգով,

20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսանողների փոխանակման միջազգային ծրագրերի,

21) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2. Համալսարանում կրթությունն ընդհատած նախկին ուսանողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները՝ բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության ընդհատման:

II. ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ուսանողի պարտականությունները

1. Համալսարանի ուսանողը պարտավոր է.

1. *անշեղորեն կատարել համալսարանի կանոնադրության, ներքինկարգապահական կանոնների և այլ իրավական ակտերի պահանջները,*
2. *կանոնավոր հաճախել ուսումնական պարապմունքներին,*
3. *սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,*
4. *տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին, կարողություններին , հմտություններին,*
5. *ժամանակին վճարել ուսման վարձավճարը,*
6. *հոգատարությամբ վերաբերվել համալսարանի գույքին,*
7. *բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը,*
8. *հարգելի պատճառով ուսումնական պարապմունքներին չներկայանալու դեպքում այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի դեկանին, իսկ համալսարան ներկայանալու առաջին իսկ օրը՝ տվյալներ ներկայացնել պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին,*
9. *հիվանդության դեպքում ֆակուլտետի դեկանին ներկայացնել համապատասխան փաստաթուղթ,*
10. *կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, այլ ներքին իրավական ակտերով նախատեսված պարտականությունները:*
11. *Այն ուսանողները, ովքեր չեն կատարում համալսարանի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով սահմանված պարտականությունները, ցուցաբերում են անբավարար ակադեմիական առաջադիմություն, կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև համալսարանից հեռացում: Արգելվում է ուսանողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի ընթացքում:*